

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Բարերար Տիար Հայկ Գավուբեանի մահուան տխուր առիթով, հետեւեալ հեռագիրները փոխանակուեցան Հայաստանայց եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեանի եւ Ս. Աթոռիս Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեանի միջեւ :

27 Ապրիլ 1977, Նիւ Եորք

Ն. Ամենապատուութիւն

Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրտէրեան

Պատրիարք Հայ Երուսաղէմի

Երուսաղէմ

Մեծ վիշտով կը տեղեկացնենք Ձերդ Ամենապատուութեան մահը մեր ժիրելի Բարերար Տիար Հայկ Գավուբեանի: Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Շարաթ առտու, Ապրիլ 30, Նիւ Եորքի Ս. Վարդան Տաճարին մէջ:

ԹՈՐԳՈՄ ԱՐԳԵՊՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Ի բացակայութեան Ամեն. Պատրիարք Ս. Հօր, Գերշ. Լուսարարապետ Ս. Հայրը հետեւեալ պատասխան-հեռագիրը ղրկեց.

27 Ապրիլ 1977, Երուսաղէմ

Գերաշնորհ

Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան

Առաջնորդ Արեւելեան Թեմի

Նիւ Եորք

Խոր ցաւով տեղեկացանք Սուրբ Աթոռիս Բարերար Տիար Հայկ Գավուբեանի մահուան: Կը յայտնենք մեր անկեղծ ցաւակցութիւնները: Կը խնդրենք որ այրի Տիկին Գավուբեանի եւ ընտանիքի սգաւոր անդամներուն հաճիք յօխանցել մեր խորունկ վշտակցութիւնը: Թող Ամենակարողն Աստուած յաւիտեական հանգիստի արժանացնէ հանգուցեալի ազնիւ հոգին:

ՀԱՅՐԻԿ ԱՐԳԵՊՍ. ԱՍԼԱՆԵԱՆ

Լուսարարապետ